



ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (171)

#3 մարտ 2020

Նվիրվում է «Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյակին եւ հայ խմբագիրներին



2005 թվականի դեկտեմբերի 25-ին հիմնադրվեց «Երաժիշտ» ամսաթերթը
2019 թվականին լրացավ ԵՊԿ հրատարակչության հիմնադրման 15-ամյակը և մեր փնտրտուքների ընթացքում նյութը պատրաստելու համար գտանք մահ շատ հոգեհարազատ փաստ հայկական առաջին պարբերականի՝ «Ազդարարի» լույս ընծայման 225 ամյակը (1.) (1794-2019թթ.), որը լրացավ 2019-ին:

«Ո՛րչափ ատեն է, որ ազգային լրագրաց անգին թերթերը թերևս գրատանց մութ անկիւնները փոշույ տակ թաղեալ կը սպասեն՝ որ արդի գրականութեան սիրովը վառեալ գրիչ մը հանէ գիրենք մոռացութեան անյատակ անդունդէն: Թերեւս քանի քանի անգամ մեծամեծ յոյսերով սնան, երբ կարծեցինք թէ Չայոց Մատենագրութեան հետամուտ եղողները կը մօտենան իրենց ալ, եւ կը բնենն հիմնովին, սակայն ի զուր եւ ընդ վայր: Չայոց Մատենագրութեան այն էջերն ալ, որ ուրիշ կողմանէ կրնան կատարեալ կոչվիլ եւ մեծամեծ քրտանց արդիւնք համարուիլ, լրագրութեան մասին չեն այնպէս ամբողջական, եւ հետաքրքիր ըմբերողի մը յագուրդ չեն տար»:

http://tert.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=4091&query_desc=an%3A471
Դիտման ամսաթիվ 14. 4 2020 թ. ժամը՝ 17.36
(շարունակելի տե՛ս՝ հաջորդ համարում)
ԳԱԼԵՄԵԱՐԵԱՆ ԳՐԻԳՈՐԻԱ

6

Вопрос создания музея Арно Бабаджаняна в Ереване не решен, что станет с архивом композитора после меня? Արա Բաբաճանյան



Արո Բաբաճանյան

Արա Բաբաճանյան, сын выдающегося композитора Арно Бабаджаняна, принял нас в московской квартире, где с 1957 года проживал «Лучший композитор мира». Такое звание Арно Бабаджаняну было присвоено в 1974 году на международном

музыкальном Фестивале в Токио. После смерти отца, уже свыше 36 лет, Арно Бабаджанян занимается важной миссией сохранения и переосмысления музыкального наследия маэстро Бабаджаняна. К сожалению, после распада Советского Союза в условиях стремительных и огромных потоков информации, очень многие замечательные деятели и деяния эпохи оказались забытыми.

Именно во избежание такой участи и инициирован «Фонд памяти Арно Бабаджаняна», который основал и возглавляет г-н Бабаджанян-младший. За время своего существования Фонд успел осуществить множество проектов в разных уголках мира. В Армении и в России ряд музыкальных образовательных учреждений носят имя Арно Бабаджаняна, каждый год проводятся концерты, фестивали, музыкальные конкурсы в память композитора.

7



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆՔԱՇԱՆՆԻ Կոմիտասի բարերարը

Ի՞նչ հետք թողեցին հայերը Թբիլիսիում. Ալեքսանդր Մանթաշով.
Այս տարի մարտի 3-ին լրացավ Ալեքսանդր Մանթաշյանցի ծննդյան 178-ամյակը

3

Կայացավ Հայ կոմպոզիտորական արվեստի 11-րդ փառատոնը՝ Նվիրված Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 100-ամյակին



Ս. Սմբատյան, Դ. Չեքիջյան, Ե. Երկանյան

2

Ա. Սպենդիարյանի
տուն-թանգարան



«Երաժշտական նվիրում կանանց միամսյակին՝ հաջրեսիր արիաներով»



Ալեքսան Խաչատրյանը՝ համերգի կազմակերպիչների և հյուրերի հետ

3

Оперная певица Татевик Бароян покоряет Metropolitan Opera



Татевик Бароян с мамой (концертмейстер)

7



Շնորհավորում ենք կանանց մայրության և գեղեցկության փոփոխության տոնիվ

Կայացավ Հայ կոմպոզիտորական արվեստի 11-րդ փառատոնը՝ Նվիրված Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 100-ամյակին



Ա. Հարությունյան Կոմպոզիտորական արվեստի 11-րդ փառատոնը՝ Նվիրված Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 100-ամյակին



Ա. Հարությունյան. ջութակի և լարային նվագախմբի Կոմպոզիտորական արվեստի 11-րդ փառատոնը՝ Նվիրված Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 100-ամյակին

1 Փետրվարի 8-ին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի կողմից Ալեքսանդր Հարությունյանի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների ներկայացմամբ մեկնարկեց Հայ կոմպոզիտորական արվեստի 11-րդ փառատոնը՝ նվիրված անվանի կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Փետրվարի 7-ին հրավիրված մամլո ասուլիսի ընթացքում դիրիժոր Յուրի Գրիգորյանը նշեց, որ մեծ պատասխանատվությամբ ու Ալեքսանդր Հարությունյանի արվեստի նկատմամբ մեծ հարգանքով են սկսում նրան նվիրված փառատոնը: Սա հերթական առիթն է կոմպոզիտորի արվեստի առջև խոնարհվելու և նրա հիշատակը հավերժացնելու: «Ալեքսանդր Հարությունյանը բացառիկ հայ կոմպոզիտորներից է, որ ստեղծել է դասական երաժշտություն հայկական մոտիվներով: Եղել է ոգևորված հայկական երաժշտությամբ և իսկական հայկական երաժշտության մեկնաբանողն է: Մենք մեծ ոգևորությամբ ենք պատրաստվում փառատոնին: Նրա հիշատակը միշտ վառ է մեր սրտերում»: ասաց Յուրի Գրիգորյանը:

Կոմպոզիտոր Երվանդ Երկանյանը, ում ստեղծագործություններից նույնպես կատարվում է փառատոնի շրջանակներում, խոսելով Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի մասին, առանձնացրեց այն փաստը, որ այն անդրադառնում է ոչ միայն հայ դասական, այլև ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններին: «Շատ գոր-

ծերները Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործական ժառանգության մասին՝ մասնատուր Երկանյանը նշեց, որ նա հսկայական դեր է ունեցել մեր սիմֆոնիկ երաժշտության մեջ. «Հայկական երաժշտությունը նա ներկայացրել է ամենաբարձր մակարդակներում: Նա հայ կոմպոզիտորներից առաջինն էր, որ ստացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչումը, առաջիններից էր, որ ստացավ ԽՍՀՄ պետական մրցանակ, և առհասարակ երիտասարդ տարիքից՝ դեռ 30-ը չհասնելով, հայտնի էր ու պատվով և փառքով էր ներկայացնում Հայաստանը: Նրա մասին դրվատանքի խոսքեր են ասել այնպիսի կոմպոզիտորներ, ինչպիսիք են Արամ Խաչատրյանը, Դմիտրի Շոստակովիչը»:

Փառատոնի գեղարվեստական ղեկավար, դիրիժոր Սերգեյ Սմբատյանը շեշտադրեց այն փաստը, որ բացի համերգային ծրագրեր ներկայացնելուց, այս նախաձեռնության շրջանակներում տարիների ընթացքում թվայնացվել են մի քանի տասնյակ սիմֆոնիկ և կամերային ստեղծագործություններ, ծայրագրվել են հարյուրավոր ստեղծագործություններ, առաջին անգամ կատարվել է հայ կոմպոզիտորների ավելի քան 150 գործեր: Սերգեյ Սմբատյանը նշեց, որ փառատոնի շրջանակներում մեր երաժշտական ժառանգության շատ նմուշներ բերվել են XXI դարի ձևաչափին: «Եթե նույնիսկ աշխարհում շատ արտիստներ կամ նվագախմբեր ցանկանան ներկայացնել մեր երաժշտությունը, ստեղծագործությունների մի մեծ տոկոս չի գտնվում այն վիճակում, որպեսզի ուղարկենք, և երաժիշտները կարողանան կատարել: Փառատոնը նաև այս խնդիրն է լուծում», - ասաց Սեր-

Ղայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը՝ Յուրի Գրիգորյանի ղեկավարությամբ, կատարեցին Ալեքսանդր Հարությունյանի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունները:

Փետրվարի 8-ին, փառատոնի բացման երեկոյին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը Յուրի Գրիգորյանի ղեկավարությամբ կատարեցին Ալեքսանդր Հարությունյանի վոկալ-սիմֆոնիկ գործերը՝ «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆոնիկ պոեմը և Կանտատ Հայրենիքի մասին ստեղծագործությունը:

Փետրվարի 12-ին, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը հնչեցին Ալեքսանդր Հարությունյանի կամերային ստեղծագործությունները:

Փետրվարի 20-ին, Արամ Խաչատրյանի համերգասրահում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը կատարեց Ալեքսանդր Հարությունյանի Սիմֆոնիետը՝ լարային նվագախմբի համար, ջութակի և լարային նվագախմբի համար գրված Կոմպոզիտոր (մենակատար՝ Ռոման Սիմոնիչ, Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի կոմպոզիտորներ), Շեփորի կոմպոզիտոր (մենակատար՝ Հայկ Գուրգենյան), ինչպես նաև՝ Տոնական մախերգանքը:

Փետրվարի 25-ին, Արամ Խաչատրյանի համերգասրահում տեղի ունեցավ փառատոնի փակման համերգը. ներկայացվեցին ժամանակակից հայ կոմպոզիտորների՝ Էդգար Յուրիանիայանի, Էդվարդ Միրզոյանի, Երվանդ Երկանյանի, Ժիրայր Շահիրմանյանի ստեղծագործությունները:

Ալեքսանդր Հարությունյանը XX դարի հայ կոմպոզիտորական դպրոցի լավագույն ներկայացուցիչներից է: Նրա բազմաթիվ ստեղծագործությունները՝ կոմպոզիտոր, օպերա, սիմֆոնիկ պոեմներ, սյուիտներ և այլն, բազմիցս հնչել են թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս: Նրա Շեփորի կոմպոզիտոր համարվում է փողային այս գործիքի համար երբևէ գրված լավագույն կոմպոզիտորներից մեկը: Այն ներառված է աշխարհի լավագույն շեփորահարների երկացանկում: «Նյու Յորք թայմսը» այս կոմպոզիտոր անվանել է հնչեղ ստեղծագործություն:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի կազմակերպիչն է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը: Այն կյանքի է կոչվում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Փառատոնի հիմնական առաքելությունը հայ ժամանա-



Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան



Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը՝ Յուրի Գրիգորյանի ղեկավարությամբ

ծերի առաջին կատարողն է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, ինչի շնորհիվ ստեղծագործական հաջողություններ են արձանագրել այն կոմպոզիտորները, որոնք երբևէ կարող էին երազել իրենց գործերը կենդանության օրոք լսել: Սա մեծ խթան է կոմպոզիտորների համար: Բացի այդ, այդ փառատոնների միջոցով Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կարկինն ավելի բացվում է, ընդգրկվում է ավելի երիտասարդ հեղինակների գործեր, ինչը չափազանց կարևոր է»: ասաց Երվանդ Երկանյանը:

գեյ Սմբատյանը: Նշենք, որ այս տարվա փառատոնի ընթացքում նույնպես թվայնացվելու են Ալեքսանդր Հարությունյանի, ինչպես նաև այլ հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ ստեղծագործություններ՝ հնարավորություն ընձեռելով հնչեցնել դրանք ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում:

11-րդ փառատոնի շրջանակում տեղի ունեցավ 3 սիմֆոնիկ և 1 կամերային համերգներ, որի ընթացքում հնչեցին Ալեքսանդր Հարությունյանի և ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Բացման երեկոյին

կակից կոմպոզիտորների ստեղծագործությունները հանրառեղակել են:

<http://www.irates.am/hy/1581083891>

<http://escs.am/am/news/5975>

Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆԸ

«Երաժշտական նվիրում կանանց միամսյակին՝ հասցնելիք արիաներով»

Ա. Սպենդիարյանի
տուն-թանգարան



1

Մարտի 7-ին, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի դահլիճում անցկացվեց «Յատընտիր արիաներ Բարոկկո դարաշրջանից» խորագրով համերգ: Միջոցառման տոնական խորհրդանիշը եռակի էր. նախ, մարտի 7-ը մեներգիչ Ալեքսան Խաչատրյանի ծննդյան օրն է, և սպենդիարյանական հյուրընկալ դահլիճում նրա առաջին մենահամերգը դարձավ յուրօրինակ նվեր թե՛ իր, թե՛ երաժշտասերների համար: Բացի այդ, երեկոն նախորդում էր կանանց միամսյակին և երիտասարդ արտիստի նվիրումն էր գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին: Եվ վերջապես, գարնանային երաժշտական հանդիպումն առանձնահատուկ էր ծրագրի ընտրությամբ. այն ունկնդիրներին պարզեց Զայաստանում համեմատաբար հազվադեպ կատարվող Բարոկկո դարաշրջանի բացառիկ արիաների ընտրանին: Իսկ ծրագիրն ընտրել էր հենց մեներգիչը՝ արպատելով, հավաքելով վոկալ «ծաղկեփունջ», փոխադրելով բառ ծայրի համար, հետևողականորեն պարապելով և վերջապես հանդիսատեսի դատին ներկայացնելով: Երաժշտական համարձակ և ոչ դյուրին նախաձեռնությունը նրա խորհրդակիցն ու ուղեցույցը վաստակաշատ կոնցերտամաստեր Լևոն Զարուբյունյանն էր, որն Ալեքսանին նվագակցեց ամբողջ համերգի ընթացքում:

Բարոկկոյի մեծագույն ներայացուցիչներից մեկի՝ Գ. Ֆ. Հենդելի ստեղծագործություններից երեկոյին հնչեց «Ազատիր, ու՛ Տեր իմ» (*Dignare o Domine*) արիան «Դեթին-գենյան Տե Դեում»-ից: 1743-ին գերմանական Դեթինգեն գյուղի մոտ տեղի էր ունեցել անգլիական և ֆրանսիական բանակների կռիվը, որը հայտնի դարձավ որպես Դեթին-գենյան մենամարտ: Հաղթեցին անգլիացիները՝ թագավոր Գեորգ 2-րդի գլխավորությամբ: Անգլիայում հաստատված գերմանացի կոմպոզիտորին այդ առիթով պատվիրեցին հատուկ ստեղծագործություն: Հենդելը 2 շաբաթում գրեց հանդիսավոր հոգևոր հիմներգ՝ *Te Deum*, որը լատիներենից թարգմանաբար նշանակում է «Փառաբանում եմք քեզ, Տեր»:

Համերգին հոգևոր կերպարային ոլորտն էր արտացոլում նաև Բարոկկոյի մյուս հանճարի՝ Յ. Ս. Բախի Ռե-մաժոր Սագնիֆիկատի 5-րդ մասը՝ «Քանգի նա մեծ գործեր արեց ինձ համար» (*Quia fecit mihi magna*) խորագրով բասի արիան, ինչպես նաև Ֆ. Դուրանտեի «Ու՛ կույս»՝ ամբողջովին սիրուց կերտված» (*Vergin tutto amor*) արիան: Այն նվիրված է Մարիամ Աստվածածնին, որին արիայի հերոսն ուղղում է աղոթքը: Ի դեպ, սա և նույն հեղինակի մեկ այլ՝ «Պարիք, պարիք, փոքրիկ աղջիկ» (*Danza fanciulla gentile*) արիան եղել են ծանալարժեքություններ և չեն ունեցել բանաստեղծական տեքստեր: Դրանք ընդգրկվել են Իտալական հնագույն երգերի ժողովածուում՝ որպես ժամանակի յուրօրինակ նմուշներ:

Գերմանական Բարոկկոյի «հիթերից» Ալեքսանը համերգային ծրագրում ընդգրկել էր հունական դիցաբանության չքնադ կերպարներ՝ երաժշտական կյանք ստացած Ք. Վ. Գլյուկի արվեստում. Օրփեոսի «Կորցրել եմ իմ էվրիդիկին» (*Che faro senza Euridice*) արիան՝ «Օրփեոս և Էվրիդիկեն» օպերայից և Պարիսի «Օ, իմ քաղցր հուր» (*O, del mio dolce ardor*) արիան՝ «Պարիս և Հեղինեն» օպերայից:

Արևաշող Իտալիայի երաժշտարվեստը «փայլեց» Բարոկկոյի դարաշրջանում: Բարձրակետերից մեկը հանդիսացավ վաղամեռիկ կոմպոզիտոր Ջ. Բ. Պերգոլեզիի ստեղծագործական ժառանգությունը: Այնուամենայնիվ, որոշ գործեր սխալմամբ են վերագրվել Պերգոլեզիին: Դրանցից 2-ը հնչեցին համերգին: Մեկը «Նինա» կամ «Սիցիլիանա» խորագրով (*Tre giorni son che Nina*) երգն էր, որի հեղինակն այժմ համարվում է նույն դարաշրջանի մեկ այլ իտալացի



Ալեքսան Խաչատրյան, Ա. Սպենդիարյանի անվ. տուն-թանգարանի տնօրեն՝ Մարինե Օթարյան



Ալեքս Խաչատրյան (բաս), Լևոն Զարուբյունյան (դաշնամուր)



Ալեքսան Խաչատրյան, Առնոլդ Քոչարյան

Լուսանկարները՝ Մարիամ Դովունու

կոմպոզիտոր՝ Վ. Լ. Չամպին: Մյուսը Իտալական հնագույն արիաների ժողովածուում տեղ գտած՝ «Թե սիրում ես ինձ» (*Se tu mami*) երգն էր, որն ավելի շուտ պատկանում է հենց ժողովածուի խմբագրին՝ կոմպոզիտոր Ա. Պարիստիին:

Մեկ այլ՝ «Թանկագին իմ սիրեցյալ» (*Caro mio ben*) արիան երկար ժամանակ վերագրվել է Ջ. Ջորդանին, բայց վերջին շրջանում մասնագետները գտնում են, որ այն ավելի շուտ հեղինակել է կոմպոզիտորի եղբայրը՝ նույնպես երաժիշտ Տ. Ջորդանին, կամ էլ հայրը՝ Ջ. Ջորդանի ավագը:

Հաջորդ իտալացի կոմպոզիտորը, որի երաժշտությանն էր դիմել մեներգիչը, Ա. Կալդարան է: Նա համարվում է երաժշտության պատմությանը հայտնի ամենաբեղուն կոմպոզիտորներից մեկը, քանի որ գրել է 3500 ստեղծագործություն: Կալդարայի վոկալ գլուխգործոցներից համերգին հնչեցին «Թեև դաժան ես» (*Sebben, crudele*) արիան՝ «Սիրո հավատարմությունը հաղթում է դավաճանությանը» օպերայից և «Ինչպես շողմ արևի» (*Come raggio di sol*) հնագույն արիան:

«Իմ ջքնաղ հուր» (*Il mio bel foco*) ռեչիտատիվը և արիան երկար ժամանակ վերագրում էին իտալացի կոմպոզիտոր, իրավաբան, քաղաքական գործիչ և բանաստեղծ Բ. Մարչելլոյին: Բայց այժմ Ֆ. Բ. Կոնտին համարվում է ավելի հավանական հեղինակ: Ռեչիտատիվն ու արիան, ինչպես և Էռնեստոյի «Համուն քեզ պաշտելու փառքի» (*Per la Gloria dadorarvi*) արիան Ջ. Բոնոնչինիի «Գրիգելյա» օպերայից, յուրովի համակրեցին իտալական շարքը:

Իսկ ահա Ա. Սկարլատին Բարոկկոյի շրջանում համարվել է «Պարոն Օպերա»։ Իր 85 օպերաներից 2-րդը՝ «Ազնվություն սիրո մեջ» խորագրով, նա գրել է 19 տարեկանում: Օպերայի հերոսներից մեկը՝ երիտասարդ ծառա Սալդինոն, հիանում է արևածագով և երգում «Գանգեսի վրա արևն արդեն» (*Gia il sole dal Gange*) նշանավոր արիան: Գանգես գետի վրա արևն է շողշողում՝ հաղթահարելով գիշերվա խավարը: Օպերաներից բացի Սկարլատին գրել է շուրջ 600 *cantate da camera*՝ «կամերային կանտատներ»։ Դրանցից մեկը՝ «Ձգում եմ սրտիս խորքում» (*Sento nel core*) արիան «գարդարեց» գարնանային երեկոն:

Չնայած ծավալուն ծրագրին՝ երաժիշտները պատրաստել էին նաև լրացուցիչ կատարումներ: XVIII դարի կոմպոզիտոր Ժ. Պ. Ե. Մարտինիի «Սիրո բերկրանք» (*Plaisir d'amour*) երգն ավելի շատ հայտնի է Է. Փրեսլի և Շ. Ազնավուրի կատարմամբ, բայց իրականում Բարոկկոյի գոհարներից է:

Իբրև նվիրում գերմանացի հանճարի՝ Լ. վան Բեթհովենի ծննդյան 250-ամյա հոբելյանին՝ Ալեքսանը մի փոքր շեղում մտցրեց Բարոկկո ծրագրում և կատարեց նրա «Այս մռայլ շիրիմում» (*"In questa tomba oscura"*) խորագրով դրամատի-

կական երգը ծայրի և դաշնամուրի համար: Բարդ երաժշտական և գեղարվեստական կերպավորմամբ առանձնացող վոկալ-կամերային արվեստի բարձրակետերից հնչեց նաև Ֆ. Հուբերտի «Անտառի արքա» (*Erlkönig*) բալլադը: Եվ որպես տուրք Սպենդիարյանին, որի հարկի տակ կայացավ այս ջերմ երաժշտական հանդիպումը, Ա. Խաչատրյանը կատարեց կոմպոզիտորի «Այ, վարդ» ռոմանսը:

Հագեցած ծրագիրը մի շնչով ներկայացնելուց հետո մեներգիչը հուզված էր, բայց և շատ ոգևորված: Նա անկեղծ շնորհակալանքի խոսք ուղղեց ներկաներին՝ իրեն մոտիվացնելու, տուն-թանգարանին՝ հարթակ տրամադրելու, սիրելի դասախոսին՝ ԵՊԿ դոցենտ Առնոլդ Քոչարյանին, ում մասնագիտական դասարանում նա ուսանում է արդեն մագիստրոսականի 1-ին կուրսում, և իհարկե նվագակցող Լ. Զարուբյունյանին: Ալեքսանը չմոռացավ նաև շնորհավորել գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին՝ նշելով, որ Բարոկկո դարաշրջանի երաժշտությունը չքնադ, վեհ ու հոգևոր արժեք ներկայացնող օրինակներով ներդաշնակ է կնոջ կերպարի հետ՝ գեղեցիկ, քնքուշ, կենարար սիրով լի:

Ալեքսանին ծննդյան օրվա և առաջին մենահամերգի առիթով շնոհավորեցին բոլորը: Երգչին հատուկ ողջույնի խոսքով դիմեց տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը, Ա. Քոչարյանն էլ նոր ձեռքբերումներ մաղթեց իր աշխատասեր ու նպատակասլաց սանին՝ նվիրելով նոտաներ:

Համերգն անցկացվեց «Տուն-թանգարանի հետ» խորագրով նախագծի շրջանակներում. այն ինքնադրսևորման հարթակ է տրամադրում երիտասարդ երաժիշտներին, վերջիններս էլ իրենց հերթին աջակցում են թանգարանին: Համերգը վարում էր թանգարանի գիտաշխատող Ինեսսա Խաչատրյանը՝ ներկայացնելով փոքրիկ պատմություններ բոլոր երաժշտական օրինակների վերաբերյալ, ինչպես նաև մեներգիի անցած ճանապարհը:

Հ. Գ. Անդրադառնալով երգչի կատարողականությանը նշեց, որ Ա. Խաչատրյանի ծայրի տարբերվում է թավ, հյուսթեղ, ինքնատիպ տեմբրով, նրա երգացանկն ընդգրկում է և յուրահատուկ: Մեր խորին համոզմամբ՝ տեխնիկական և երաժշտական կերպարների արտիստական մեկնաբանության որոշ թերացումները հետևողական աշխատանքի շնորհիվ կհաղթահարվեն: Երիտասարդ երաժիշտ ունի լուրջ հաջողությունների հասնելու մեծ ներուժ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ
Երաժշտագետ,
Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի
ավագ գիտաշխատող

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆՔԱՇԱՆՑ. ԿՈՄԻՏԱՍԻ ԲԱՐԵՐԱՐԸ

Հայերը Թբիլիսիում

1

Վերջին 2 հարյուրամյակների ընթացքում Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին համարվել է Անդրկովկասի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը, անգամ՝ մարգարիտը: Քաղաքն իր գեղեցկության ու շքեղության համար պարտական էր նաև այդտեղ ապրող ու արարող հայ գործարարներին՝ Ալեքսանդր Մանթաշյանցին կամ, որ ընդունված էր ասել, Մանթաշյանցի, Միքայել Արամյանցին, Մելիք Ազարյանցին, Մելիք Շահնազարովին, Քալանթարով եղբայրներին: Մենք մեր շարքում կանդրադառնանք Թբիլիսիում հետք թողած հայերին:

Ալեքսանդր Մանթաշյանց (մարտի 3, 1842, Թիֆլիս - ապրիլի 19, 1911, Մանկո Պետերբուրգ) գործարարն ու բարեգործը իր ժամանակի ամենասիրված ու հարգված մարդկանցից մեկն էր: Ջբաղվել է նավթի արտահանմամբ և ստացել «նավթի արքա» մականունը: Իր ապրած ժամանակում ամենահարուստ մարդկանցից մեկն է համարվել: 1899-ին Մանթաշյանցն ստեղծել է «Ալեքսանդր Մանթաշև և Կո» ընկերությունը, որը XX դարի սկզբին արդյունահանում էր Բաքվի նավթի կեսից ավելին: Նա ֆինանսավորել է Բաքու-Բա-

թում նավթատարի շինարարությունը:

Նրա անվան շուրջ տարբեր պատմություններ են հյուսվել: Դրանցից մեկն ահա այսպիսի պատմություն ունի:

Վարսավիրանոց հերթական այցելությունից հետո, երբ Ալեքսանդր Մանթաշյանցը պատրաստվում էր հեռանալ, վարսավիրը կես կատակ-կես լուրջ ասում է, որ նրա տղան սափրվելուց հետո միշտ հինգ ռուբլիանոց է թողնում: Մանթաշյանցն ուղղակի պատասխանում է.

-Նա Մանթաշյանցի տղան է, ես ո՞վ եմ, - ասում է Մանթաշյանցն ու հեռանում:

Արանից էլ այն թևավոր խոսքը: Երբ ցանկանում են մեկին հանդիմանել շայլության համար, ասում են. «Հո՞ Մանթաշյանցի տղան չես»:

Թիֆլիսի Մանթաշյանցի անվ. ձիարշավարանների սեփականատերը լինելով՝ նա նույնիսկ սեփական կառք չուներ: Սիրում էր ոտքով քայլել կամ տրամվայ նստել: Կառք նստում էր միայն ծայրահեղ դեպքում: Մանթաշյանցը համեստ մարդ էր: Շքանշաններ չէր կրում: Միակ զարդը թարմ ծաղիկն էր՝ ամրացված կրծքին: Շատ էր սիրում Սայաթ-Նովայի երգերը ու ամեն առիթի՝ քթի տակ միշտ երգում էր դրանք:

Ասում են, որ տնից դուրս գալիս, միշտ 5 ռուբլիանոց ոսկեդրամներ էր դնում գրպանը: Չունկող ուսանողներ տեսնելիս, մոտենում էր, զրույցի բռնվում, հարցնում հոր որպիսությունն ու աննկատ գրպանը դնելով դրամը՝ հեռանում:

Միայն եզակի դեպքերում էր կառք նստում: Սակայն, երբ մի անգամ պատահական տեսել էր՝ ինչպես է Վրաստանի և Իմերեթիայի Հայոց թեմակալ առաջնորդը պաշտոնական այցերի ժամանակ հասարակ կառք նստել, երկծիանոց մի շքեղ կառք էր գնել և նվիրել առաջնորդարանին:

Մանթաշյանցի կյանքը

Մանթաշյանցը իր ժամանակի ամենախոշոր հայ ձեռնարկատերերից մեկն էր ու ամենամեծ բարերարը: Այնպես չէ, որ ի ծնե հարուստ էր: Ապագա նավթային մագնատը ծնվել է 1842 թվականին Թիֆլիսում: Թավրիզում հոր հետ տեքստիլի ոլորտում բիզնեսով էր զբաղվում: Բայց նա ուշադրություն էր դարձրել ամեն կերպ կրթություն ստանալուն: Ուստի հետագայում անգլիական Մանչեսթեր քաղաքում յուրացրել էր բիզնես վարելու նրբություններն ու մշակույթը:

(Շարունակելի)
<https://www.shantnews.am/news/view/9222.html>
Մյուրք պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆԸ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՊԱՎՍԽԱՆ

Հանրության հոգևոր-մշակութային դաստիարակությունը, ազգը ներկայացնող արժեքների պահպանումը, զարգացումը և արժանապատիվ հանրահռչակումը շարունակական երևույթ է, որն անտեսելը կամ երկրորդական պլան մղելը, մեղմ ասած, պատվաբեր չէ պետության, մտավորականության և հանրության համար: Տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված համամարդկային և մեր ազգային հոգևոր-մշակութային ժառանգության հիման վրա հանրության դաստիարակումը կամ ինքնադաստիարակումը մի կարևոր հրամայական է՝ մասնավոր մեր օրերում տեղեկատվական տեխնոլոգիաների անընդհատ զարգացման ու մատչելիության և առավել ևս՝ տեղեկատվության չտեսնված ազատության պայմաններում, որն ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Հետաքրքիր է, թե Հայաստանի Հանրապետության մերօրյա կառավարությունը և մշակույթի ոլորտի գործիչները արդյոք իրենց առաջ դրել են խնդիր, թե ինչպես է «կատարվում» հանրության հոգևոր-մշակութային դաստիարակությունը, և ինչպիսի քայլեր են անհրաժեշտ հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, մշակութային, հոգևոր, նաև տնտեսական և այլ բնագավառներում ինքնահաստատման ու զարգացման, առհասարակ ընդհանուր իրավիճակի բարելավման համար: Եվ որչա՞փ ենք մենք գիտակցում աշխարհի և ինքներս մեր առաջ դրված մեր պատասխանատվությունը, որչա՞փ ենք պատրաստ այսպիսի քայլեր անելու, և ի՞նչ քայլեր ենք անում յուրաքանչյուրս՝ պետությունն իր կողմից, մտավորականությունն իր կողմից, հանրությունն իր կողմից:

Քանի որ երաժշտությունն արվեստ լինելուց բացի նաև ազգությունը վառ կերպով ներկայացնող բնութագիր հատկանիշներից է, ազգության պատշաճ ներկայացման համար խիստ կարևոր է՝ թե այս բնագավառի գործիչներն ինչպես և ինչ մակարակով են հրապարակ հանում իրենց գործերը: Կոմպոզիտորը չի կարող ստեղծել երկը և թողնել այդ վիճակում՝ առանց հանրահռչակելու: Համերգների կարևորությունը քննարկման առարկա չէ: Սակայն տվյալ անհատի երաժշտական ստեղծագործության հանրահռչակումը հնարավոր չէ սահմանափակել միայն համերգներով: Առավել ևս, եթե տվյալ երկն այնքան է ընդունվում հանրության կողմից, որ ունկնդիր երաժիշտը (լինի կատարող, թե տեսաբան) ցանկություն է հայտնում սեփական մեկնաբանմամբ վերընկալել այն, անհրաժեշտություն է ծագում ստեղծագործությունը գրավոր տեսքով հրապարակելու: Եթե դեռ տասնամյակներ առաջ հարգի էր արտագրությունը, այժմ գրեթե յուրաքանչյուր ստեղծագործ անհատ հնարավորություն ունի ինչպես մեքենագրել (այսինքն՝ համադրագային հատուկ ծրագրերով շարվածքի ենթարկել) իր ցանկացած ստեղծագործությունը, այնպես էլ տպագիր կամ թվային եղանակներով հրապարակել այն:

Տվյալ կոմպոզիտորի ստեղծագործական դիմանկարին առավել լիակատար և համակողմանի կերպով կարելի է ծանոթանալ, երբ հրապարակված են նրա ստեղծագործությունները և այդ հրապարակումները իրար հետ կազմում են մի որոշակի ամբողջություն: Խոսքը տպագիր հրապարակումների առավել հարգի տիպերից մեկի՝ երկերի ժողովածուի մասին է: Վերջիններս զգացնել են տալիս իրենց նշանակալիության մասին ոչ միայն բովանդակությամբ, այլև արտաքին ծավալով. երբ դրանք դրվում են գրադարակի վրա, առանձին փոքր տետրերի տեսքով տպագրված երկերը կամ փոքրածավալ ժողովածուները թողնում են աննշան տպավորություն: Մյուս կողմից՝ երկերի ժողովածուն, որպես գրադարակալական առարկա, պահանջում է ոչ միայն ընտրված ֆորմատի ու ձևավորման համապատասխանություն, այլև հատուկ մշակված խմբագրական սկզբունքներ և չափորոշիչներ, մասնավոր թե՛ այն բաղկացած է մի քանի հատորից և ունի օժանդակ ապարատ (առաջաբան, հավելվածներ, ծանոթագրություններ և այլն): Երկերի ժողովածուն ոչ միայն տվյալ ստեղծագործողին պաշտոնապես և փոքրիշատե լիակատար ու համակողմանիորեն ներկայացնելու միջոց է, այլև ինքնին արվեստ է և գիտություն, որը ներկա հայաստանյան իրականության մեջ կիրառվում է բացառապես գրողների, հիմնականում դասական գրողների օրինակով, մինչդեռ հրատարակության այս տեսակն ունի բոլոր իրավունքները կիրառվելու նաև մեր կոմպոզիտորների օրինակով՝ նրանց ստեղծագործությունը բավարար չափով հանրահռչակելու և դրանց հիման վրա հանրության հոգևոր-մշակութային դաստիարակության գործն առավել հստակ հիմքերի վրա դնելու համար:

Հայ ժողովուրդն ինչքա՛ն արժանավոր կոմպոզիտորներ է տվել աշխարհին: Եվ այդ կոմպոզիտորների ստեղծագործական ժառանգությունն որչա՞փ է հայտնի հանրությանը: Նույնիսկ եթե տվյալ հեղինակի մասին գրվում են հոդվածներ, գրքեր, որտեղ մի դեպքում բերվում են ստեղծագործությունների ցուցակներ, իսկ առավել հաճախ վերլուծության են ենթարկվում առավել ակնառու համարվող երկերը, որչա՞փ կարող են արժեքավոր համարվել այդօ-

րինակ նկարագրերն ու վերլուծությունները, եթե երաժշտին հասու չէ հենց ստեղծագործության բնագիրը: Մի՞թե կարելի է թույլ տալ, որ տվյալ արժանի կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգության միայն մի փոքր մասը հրապարակված լինի, իսկ մյուս երկերը ձեռագիր վիճակում մնան հեղինակի կամ այլ արխիվներում և շարունակեն կրել ժամանակի կնիքը՝ մաշվելուց մինչև իսպառ ոչնչացումը:

Հայ կոմպոզիտորներից շատ քչերն են, ում ստեղծագործությունները հրատարակված են փոքրիշատե ամբողջությամբ, և այդ հրատարակությունները կարող են կազմել մեկ ամբողջություն՝ «երկերի ժողովածու» խորագրով: Նրանք են՝ Կոմիտաս վարդապետը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Արամ Խաչատրյանը և Նիկոլ Գալանտերյանը: Հրատարակության այս տիպին են միտված նաև Ալեքսանդր Դուլսիանյանի վոկալ երկերի ժողովածուն (6 հատորով), ինչպես նաև Տիգրան Զուխանյանի երկերի կահիրյան գիտական հրատարակությունները, որոնք չեն մեկտեղված «երկերի ժողովածու» կամ մասնատիպ ընդհանուր խորագրի ներքո՝ չնայած ֆորմատի և խմբագրության տիպի նմանությանը: Ընդհակառակը՝ մեր կոմպոզիտորներից ոմանց երկերը հեղինակների կողմից հրատարակվում են փոքրիշատե լիակատար, բայց ոչ որպես ժողովածու. օրինակ՝ Արեգ Լուսինյանի կամ լուսահոգի Գագիկ Դովունցի երկերը: Իսկ Ռոբերտ Ամիրխանյանի երգերի 2000 թ. ժողովածուի անոտացիայում առկա է հետևյալ նախադասությունը. «Ռոբերտ Ամիրխանյանի երգերի այս ժողովածուն սկիզբն է երկերի լիակատար հրատարակության, որը կազմված է ըստ ժանրային, լեզվական և ժանանակագրային առանձնահատկությունների»: Եվ իրոք՝ այդ հատորին հետագայում հաջորդեցին ռուսերեն երգերի կլավիրների ժողովածուն, դաշնամուրային երկերի ժողովածուն, «Պոեմի կյանքը» մեծածավալ կանոնադր, բայց դրանք փաստորեն միմյանցից առանձին հրատարակություններ են, որոնք մեկտեղվելու դեպքում կարող են ժողովածուի տպավորություն թողնել միայն ըստ բովանդակության:

Մինչդեռ երկերի ժողովածուն, ինչպես արդեն նշեցինք, պահանջում է որոշակի միօրինակություն ըստ ֆորմատի, ըստ խմբագրական ընտրված սկզբունքների, ըստ շարվածքի ոճի: Առավել ևս՝ անթույլատրելի է մեկ հատորում իրար խառնել տեքստի շարվածքի տարբեր ոճեր, ինչպես արվեց, օրինակ, Արամ Սաթյանի «Մենք դաշնամուր ենք նվագում» ժողովածուում. այս տեսանկյունից, մեղմ ասած, անպատվություն էր Առնո Բաբաջանյանի երկերի 2012 թ. երևանյան մեկնատրոյակը, որին նույնիսկ չենք ցանկանում անդրադառնալ: Առհասարակ երաժշտական հրատարակությունները, անկախ ծավալից և տպաքանակից, պահանջում են խմբագրից և հրատարակչից ոչ միայն երաժշտական գրագիտություն, այլև հմտություն խմբագրական ոլորտում, լեզվաբանության տարբեր ոլորտների բավարար իմացություն: Այն դեպքում, երբ Հայաստանում քիչ չեն երաժշտական մասնագիտացված հրատարակչությունները, հեղինակային հրատարակություններն իրենց հերթին, ենթադրվում է, որ պիտի տպագրության պատրաստվեն պատշաճ մակարդակով, բավարար գրագիտորեն: Այս առումով ուսանելի կարող է լինել Կոմիտասի՝ վերջերս լույս տեսած «Գերմանական երկեր» ժողովածուի դեպքը, որին անդրադառնալու առիթ արդեն ունեցել ենք:

Եվ այսպես, երաժշտական երկերի ժողովածուի ծրագիր սկսելիս և իրագործելիս անհրաժեշտ է տիրապետել բավարար հիմքերի՝ ինչպես ընդհանուր երաժշտական, լեզվաբանական և խմբագրական ոլորտներում, այնպես էլ անհրաժեշտ է բավարար (եթե ոչ սպառնիչ) չափով ծանոթ լինել հրատարակվող հեղինակի կյանքին, գործունեությանը և երաժշտական ժառանգությանը: Այս առումով գիտահրատարակչական ոլորտի զագաթնակետ են համարվում ակադեմիական հրատարակությունները (անկախ լիակատար ժողովածու, հատընտիր կամ առանձին երկի հրատարակություն լինելուց), որոնք ներկայացվող երկերին զուգահեռ հրապարակ են հանում նաև հատուկ մշակված օժանդակ գիտական ապարատը (ներածական ուսումնասիրություն, տարբեր տիպերի ծանոթագրություններ, հավելվածներ ևն): Այս առումով հայ երաժշտագիտության մեջ չգերազանցված զագաթնակետ է Կոմիտասի երկերի ակադեմիական ժողովածուն՝ Ռոբերտ Աբայանի ընդհանուր խմբագրությամբ, քանի որ այստեղ ներառված յուրաքանչյուր ստեղծագործություն ենթարկվել է մանրամասն պատմագիտական, երաժշտագիտական և տեքստաբանական ուսումնասիրման: Սպենդիարյանի ժողովածուն ներկայացվող ծանոթագրություններն ավելի համառոտ և ընդհանուր են. տեքստաբանության մեջ ծանոթագրությունների այդ տիպին տրվում է «ռեալ» բնորոշիչը:

Խորհրդահայ երաժշտական գրականության մեջ կան հիշատակումներ առ այն, որ Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի գիտահրատարակչական

ծրագրերի մեջ էին մտնում նաև Ռոմանոս Մելիքյանի, Արմեն Տիգրանյանի, Մակար Եկմալյանի երկերի լիակատար ժողովածուները: Մեզ համար դեռ պարզ չէ՝ արդյոք մշակվել են այդ ժողովածուների նախապատրաստական ծրագրեր ըստ հատորների քանակի և ընդհանուր բովանդակության, ինչպես տողերիս հեղինակը պատրաստեց Առնո Բաբաջանյանի երկերի ժողովածուի ծրագիրը: Ներկայումս մույն ինստիտուտի առաջնահերթ խնդիրներից է Տիգրան Զուխանյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակումը. այս գաղափարի հեղինակը՝ վաստակաշատ երաժշտագետ պրոֆ. Աննա Ասատրյանը պատրաստել է այդ ժողովածուի նախապատրաստական ծրագիրը. իսկ թե այն քանի հատորից է բաղկացած լինելու, ներառվելիք նյութերի խմբագրման գիտական ոճը և պատրաստվելիք օժանդակ ապարատն որչափ են առնչվում կահիրեաբնակ երաժշտագետ-խմբագիր Հայկ Ավագյանի պատրաստած հրատարակություններին, պարզաբանումը թողնում ենք պրոֆեսոր Ասատրյանին:

Քանի որ ներկայումս շատերը, այդ թվում՝ պետական այրեր, առաջնորդվում են զուտ ֆինանսական մտածելակերպով՝ առանց բավարար ուշադրություն դարձնելու երկրի հոգևոր-մշակութային կյանքի կարգավորմանն ու զարգացմանը, իսկ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, փաստորեն զուրկ լինելով պետական աջակցությունից, գործում և իր՝ համեմատաբար փոքրածավալ հրատարակչական ծրագրերն իրականացնում է սեփական ուժերով, այս տիպի ծավալուն հրատարակություն ունենալու մասին մնում է երազել և հուսալ, որ վաղ թե ուշ մեր երաժշտական կյանքը (և ոչ միայն) պիտի վերածնունդ ապրի:

Մյուս կողմից՝ «երկերի ժողովածու» տիպի հրատարակությունները բնավ չեն պարտադրում մեզ գիտական մասնասններ՝ մասնավոր որ վերջիններս հրատարակչական պատրաստելու համար գիտնականից պահանջվում է երկար ժամանակ և ուշադրության հստակեցում: Վերջապես՝ խորհրդային շրջանի, ինչպես նաև մեր օրերի կոմպոզիտորներից շատերն իրոք արժանի են, որ նրանց ստեղծագործությունները հավաքվեն, պատրաստվեն և տպագրվեն երկերի ժողովածուի տեսքով: Հայ դասական, ինչպես նաև էստրադային կոմպոզիտորներից այս առումով հիշատակման են արժանի Սարգիս Բարխուդարյանը, Հրաթ Ստեփանյանը, Արտեմի Այվազյանը, Արամ Սաթունցը, Ստեփան Զրբաշյանը, Ղազարոս Սարյանը, Գևորգ Արմենյանը, Վաղարշակ Կոտոյանը, Աղամ Խուդոյանը, Էդվարդ Միրզոյանը, Էդուարդ Աբրահամյանը, Ալեքսանդր Աճեմյանը, Ջիվան Տեր-Թադևոսյանը, Գրիգոր Հախինյանը, Խաչատուր Ավետիսյանը, Ալեքսան Դեմիտյանը, Ավետ Տերտերյանը, Հարություն Դելլալյանը, Ստեփան Լուսինյանը... Այս և բազում այլ կոմպոզիտորներ ու նրանց ստեղծագործություններից շատերը մեր օրերում հանիրավի մատնված են մոռացության. իսկ հիմնական պատճառն այն է, որ նրանց երկերը շատ հաճախ տպագրվել են փոքր ծավալներով և պատահականորեն:

Վերջապես՝ մեզ հետ, մեր կողքին կան կոմպոզիտորներ, որոնք մեծ ավանդ ունեն հայ արդի երաժշտարվեստի կայացման և զարգացման գործում և արժանի են երկերի ժողովածու ունենալու պատվին: Խոսքը Տիգրան Մանսուրյանի, Ռուբեն Ալթունյանի, Մարտին Վարդապարյանի, Մելիք Մավիսակալյանի, Վլադիլեն Բալյանի, Արեգ Լուսինյանի, Գեղունի Զթյանի, Արամ Սաթյանի, Երվանդ Երկանյանի, Լևոն Զառչյանի և այլոց մասին է:

Թյուրիմացություն կլինի կարծել, որ այս տիպի ծավալուն հրատարակությունն անպայման արվում է հեղինակի վախճանից հետո միայն: Այս դեպքում իրենց լույս տեսնելուն են սպասում Էդուարդ Սադոյանի, Յուրի Զարությունյանի, Ստեփան Շաքարյանի երկերի ժողովածուները: Չէ՞ որ նրանք էլ մույնքան արժանիք ունեցող և մույնքան նշանակալի ավանդ ունեցած կոմպոզիտորներ էին:

Հ.Գ. Մեկ անգամ ևս նշենք, որ հայ նշանավոր կոմպոզիտորների ստեղծագործական ժառանգության համակողմանի ուսումնասիրումը և, լավագույն դեպքում, հրապարակումը երկերի ժողովածուի տեսքով, մեր խորին հանդգամբ, սկզբունքային խնդիր է, որի իրագործման համար սխալ կլինի հույսը դնել միայն պետությունից կամ որևէ մասնավոր անձից կամ հաստատությունից ստացվելիք ֆինանսական աջակցության վրա: Ինչ խոսք, երաժշտական ժողովածուներից յուրաքանչյուրի պատրաստումը ժամանակատար և ծախսատար գործ է, սակայն նպատակահարմար ենք գտնում, մինչ բուն ժողովածուներին անցնելը, ծրագրել հայ կոմպոզիտորներին նվիրված ուսումնասիրություններ՝ մեծագրությունների և երկերի ցուցակների տեսքով: Ուստի մենք առաջարկում ենք Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ղեկավար-

Հայրենիքն աշխարհի մի մասը դարձնելով. դուդուկահար Արսեն Պետրոսյան



Արսեն Պետրոսյան

Նրա տատիկի հայրը դուդուկահար է եղել, ընտանիքում ժողովրդական երաժշտությունը միշտ էլ հնչել է։ Ու զարմանալի չէր, որ հայրը 5 տարեկան որդու ձեռքից բռնել-տարել է երաժշտական դպրոց։ Փոքր էր, ասել են՝ մի տարի էլ սպասեք։ ...Սկզբում չվի նվագել է սովորել, 5 տարի հետո՝ դուդուկ։

14 տարեկանում են ինքն ու դուդուկը ռուբիկոնն անցել. համերգային առաջին շրջագայությունը ԱՄՆ-ում ու Կանադայում, որից հետո հաստատապես է հանդգնել ինքն ու դուդուկն անբաժան են լինելու։ Գիտակցելով, որ ճանապարհը բարդ է լինելու, այնուամենայնիվ ընտրել է հենց այդ ուղին։

Դուդուկահար Արսեն Պետրոսյանի արմատները Զավաթուն են, իսկ երաժշտական ուղին սկսվել է ծննդավայր Չարենցավանից. նվագել է նաև մարզերում, հետո՝ Երևան, կոնսերվատորիա։

Ազգայինը՝ ինքնատիպ ու հետաքրքիր

